

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 7-ին, կիրակի.—Հոգեգալուստ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 29):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 20-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը:

* * *

Հունիսի 21-ին, կիրակի.—Տօն կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց (տես էջ 33):

Հավարտ ս. պատարագի կատարվեց «Հայրապետական մաղթանք»:

* * *

Հունիսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը:

* * *

Հուլիսի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Պարետ վրդ. Երիցյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 12-ին, կիրակի.—Գիտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ներսես ավ. քհն. Զեբեջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 19-ին, կիրակի.—Զ օր զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

* * *

Հուլիսի 26-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց (տես էջ 37):

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

* * *

Հուլիսի 27-ին, երկուշաբթի—Բ. օր Վարդավառի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի հայոց արևելյան թեմի ծիսակատար քահանա արժանապատիվ Տ. Թադեոս Աբդալյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»: